# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Խաչպար ՍՊԸ-ն ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/14 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը |
| 34 | Ինտերսեն պլյուս | Բոնսոլար | <<Բոնսոլար ցողացրիչ 750 մլ>> : Որպես ազդող նյութ, պարունակում է պոլիհեքսամեթիլենբիգուանիդին հիդրոքլորիդ՝ 0,04%, ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի և ալկիլդիմեթիլէթիլբենզիլամոնիումի քլորիդներ՝ 0,128%, ֆունկցիոնալ հավելումներ այդ թվում՝ ոչ իոնոգեն մակերեսային ակտիվ նյութեր, չի պարունակում սպիրտ: Ախտահանիչ միջոցը օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ, այդ թվում՝ տուբերկուլոզի հարուցիչների, ներհիվանդանոցային վարակների, Ստաֆիլակոկուս աուրեուսի մեթիցիլինկայուն, պենիցիլինկայուն և վանկոմիցինկայուն շտամների, Կանդիդա սնկերի, դերմատոֆիտների և բորբոսասնկերի, վիրուսների (ադենովիրուսների, գրիպի վիրուսի պարագրիպի և այլ սուր շնչառական վարակների հարուցիչների, էնտերովիրուսների, ռոտավիրուսների, պոլիոմիելիտի վիրուսի, մարդու իմունային անբավարության վիրուսով հարուցված վարակի, ընդերային և արտաընդերային հեպատիտների վիրուսների, ատիպիկ թոքաբորբի, գրիպի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | վիրուսի՝ այդ թվում H5N1, H1N1, հերպես վիրուսի և այլն) նկատմամբ: Ախտահանիչ միջոցը նախատեսված է ինկուբատորների, կուվեզների, տրանսպորտային ինկուբատորների, անհասների և նորածինների համար նախատեսված վերակենդանացման բաց համակարգերի և վերակենդանացման համալիրների արագ ախտահանման, շենքերում ոչ շատ մեծ և դժվարհասանելի մակերեսների, ապարատների և սարքավորումների (այդ թվում թոքերի արհեստական շնչառության ապարատների, անեսթեզիայի սարքավորումների) մակերեսների, օպտիկական սարքերի (այդ թվում գերձայնային հետազոտության տվիչների, ՈՒՁ հետազոտության ներդիտակների), անջրաթափանց ներքնակի ծածկոցների, ռետինե, պոլիպրոպիլենե և պլաստիկե գորգերի և այլնի (այդ թվում արյունով և այլ կենսաբանական արտադրություններով աղտոտված մակերեսների լվացման հետ համակցված) ախտահանման համար: Ունի ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ՝ առ 06 հուլիսի 2016թ., թիվ 2097-Ա: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Խաչպար ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/14 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | технические характеристики |
| 34 | | | |